Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-419-28.10.2022-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 5-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետում «, իսկ սույն օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասում նշված անձանց համար՝ 3 տարի» բառերը հանել:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածում ուժը կորցրած ճանաչել 2-րդ մասի 5-րդ կետը:

Հոդված 3. Օրենքի 26-րդ հոդվածում.

1) 1-ին մասում «նշանակումը, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասում նշված զինծառայողների,» բառերը փոխարինել «նշանակումն» բառով.

2) 3-րդ մասում «, ինչպես նաև սույն հոդվածի 5-րդ մասում նշված զինծառայողների» բառերը հանել.

3) ուժը կորցրած ճանաչել 5-րդ մասը:

Հոդված 4. Օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասում «պաշտպանության նախարարի հրամանով» բառերը փոխարինել «կառավարության որոշմամբ» բառերով:

Հոդված 5. Օրենքի 28-րդ հոդվածում ուժը կորցրած ճանաչել 1-ին մասի 4-րդ կետը և 12-րդ մասը:

Հոդված 6. Օրենքի 29-րդ հոդվածում.

1) 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետում և 2-րդ մասում «, բացառությամբ սույն օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված շարքային կազմի պարտադիր զինծառայողների» բառերը հանել.

2) 4-րդ մասում «, բացառությամբ սույն օրենքի 26-րդ մասի 5-րդ կետով նախատեսված զինծառայողների, որոնք զորակոչի միջոցով ուղարկվում են շարունակելու պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետը՝ անկախ պարտադիր զինվորական ծառայության ծառայած ժամկետից» բառերը հանել:

Հոդված 7. Օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում «տարի» բառից հետո լրացնել «, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված զինծառայողների համար՝ 5 տարի» բառերը:

Հոդված 8. Օրենքի 61-րդ հոդվածի 3-րդ մասում «և սույն օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պայմանագիր կնքած զինծառայողների» բառերը հանել:

Հոդված 9. Օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Սույն օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված պայմանագրային զինծառայողներին պայմանագրի ժամկետը լրանալու և (կամ) առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչելու հիմքով ժամկետից շուտ պայմանագրային զինվորական ծառայությունից արձակելիս հաշվարկվում է պատվովճար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով և չափով:»:

Հոդված 10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայություն անցնող զինծառայողները շարունակում են իրենց ծառայությունը՝ կնքված պայմանագրի պայմաններին համապատասխան, իսկ պարտադիր զինվորական ծառայությունից արձակվելուց հետո հաշվարկված պատվովճարի գումարը տնօրինում են իրենց հայեցողությամբ՝ առանց Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ուղղությունների: Սույն մասով սահմանված պատվովճարի գումարն իրենց հայեցողությամբ՝ առանց Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ուղղությունների, տնօրինելու իրավունքը տարածվում է նաև մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը պատվովճար ստացած քաղաքացիների վրա՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ուղղություններով չօգտագործված պատվովճարի գումարի մասով:

3. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված պատվովճարը հաշվարկվում է նաև մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքած և ծառայության ընթացքում զոհված (մահացած) կամ դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողի ընտանիքի անդամներին, որոնք պատվովճարի գումարը տնօրինում են իրենց հայեցողությամբ՝ առանց Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած

ուղղությունների: Սույն մասի իմաստով զոհված (մահացած) կամ դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողի ընտանիքի անդամ են համարվում զինծառայողի ծնողը, կինը և երեխան: Սույն մասի հիման վրա Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը ***սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում*** ապահովում է համապատասխան շահառուներին պատվովճարի հաշվարկման գործընթացը՝ պատվովճարի գումարը շահառուների հաշվին փոխանցելու միջոցով:

4. Սույն օրենքի 4-րդ հոդվածում նախատեսված, ինչպես նաև սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված այլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ***ակտերն*** ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 90 օրացուցային օրվա ընթացքում:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ (Կ-419-28.10.2022-ՊԱ-011/1)

~~ՀՈԴՎԱԾ~~ Հոդված **1**. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 5-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետում «, իսկ սույն օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասում նշված անձանց համար՝ 3 տարի» բառերը հանել:

~~ՀՈԴՎԱԾ~~ Հոդված **2**. Օրենքի 7-րդ հոդվածում ուժը կորցրած ճանաչել 2-րդ մասի 5-րդ կետը:

~~ՀՈԴՎԱԾ~~ Հոդված **3**. Օրենքի 26-րդ հոդվածում.

1) 1-ին մասում «նշանակումը, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասում նշված զինծառայողների,» բառերը փոխարինել «նշանակումն» բառով.

2) 3-րդ մասում «, ինչպես նաև սույն հոդվածի 5-րդ մասում նշված զինծառայողների» բառերը հանել.

3) ուժը կորցրած ճանաչել 5-րդ մասը:

~~ՀՈԴՎԱԾ~~ Հոդված **4**. Օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասում «պաշտպանության նախարարի հրամանով» բառերը փոխարինել «կառավարության որոշմամբ» բառերով:

~~ՀՈԴՎԱԾ~~ Հոդված **5**. Օրենքի 28-րդ հոդվածում ուժը կորցրած ճանաչել 1-ին մասի 4-րդ կետը և 12-րդ մասը:

~~ՀՈԴՎԱԾ~~ Հոդված **6**. Օրենքի 29-րդ հոդվածում.

1) 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետում և 2-րդ մասում «, բացառությամբ սույն օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված շարքային կազմի պարտադիր զինծառայողների» բառերը հանել.

2) 4-րդ մասում «, բացառությամբ սույն օրենքի 26-րդ մասի 5-րդ կետով նախատեսված զինծառայողների, որոնք զորակոչի միջոցով ուղարկվում են շարունակելու պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետը՝ անկախ պարտադիր զինվորական ծառայության ծառայած ժամկետից» բառերը հանել:

~~ՀՈԴՎԱԾ~~ Հոդված **7**. Օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում «տարի» բառից հետո լրացնել «, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված զինծառայողների համար՝ 5 տարի» բառերը:

~~ՀՈԴՎԱԾ~~ Հոդված **8**. Օրենքի 61-րդ հոդվածի 3-րդ մասում «և սույն օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պայմանագիր կնքած զինծառայողների» բառերը հանել:

~~ՀՈԴՎԱԾ~~ Հոդված **9**. Օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Սույն օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված պայմանագրային զինծառայողներին պայմանագրի ժամկետը լրանալու և (կամ) առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչելու հիմքով ժամկետից շուտ պայմանագրային զինվորական ծառայությունից արձակելիս հաշվարկվում է պատվովճար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով և չափով:»:

~~ՀՈԴՎԱԾ~~ Հոդված **10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայություն անցնող զինծառայողները շարունակում են իրենց ծառայությունը՝ կնքված պայմանագրի պայմաններին համապատասխան, իսկ պարտադիր զինվորական ծառայությունից արձակվելուց հետո հաշվարկված պատվովճարի գումարը տնօրինում են իրենց հայեցողությամբ՝ առանց Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ուղղությունների: Սույն մասով սահմանված պատվովճարի գումարն իրենց հայեցողությամբ՝ առանց Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ուղղությունների, տնօրինելու իրավունքը տարածվում է նաև մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը պատվովճար ստացած քաղաքացիների վրա՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ Հայաստանի

Հանրապետության կառավարության սահմանած ուղղություններով չօգտագործված պատվովճարի գումարի մասով:

3. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված պատվովճարը հաշվարկվում է նաև մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքած և ծառայության ընթացքում զոհված (մահացած) կամ դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողի ընտանիքի անդամներին, որոնք պատվովճարի գումարը տնօրինում են իրենց հայեցողությամբ՝ առանց Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ուղղությունների: Սույն մասի իմաստով զոհված (մահացած) կամ դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողի ընտանիքի անդամ են համարվում զինծառայողի ծնողը, կինը և երեխան: Սույն մասի հիման վրա Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովում է համապատասխան շահառուներին պատվովճարի հաշվարկման գործընթացը՝ պատվովճարի գումարը շահառուների հաշվին փոխանցելու միջոցով:

4. Սույն օրենքի 4-րդ հոդվածում նախատեսված, ինչպես նաև սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված այլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 90 օրացուցային օրվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ և ՉԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-419-28.10.2022-ՊԱ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-10 հոդվածներ	Նախագծի ողջ տեքստում «ՀՈԴՎԱԾ» բառերը փոխարինել «Հոդված» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, այն է. «Հոդվածի համարից առաջ գրվում է «Հոդված» բառը»:	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 10-րդ հոդվածի 3-րդ մաս	Նախագծի 10-րդ հոդվածի 3-րդ մասում «պաշտպանության նախարարությունը» բառերից հետո լրացնել «սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո» բառերը:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 10-րդ հոդվածի 4-րդ մաս	Նախագծի 10-րդ հոդվածի 4-րդ մասում «նորմատիվ իրավական» բառերից հետո լրացնել «ակտերն» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**